Արմավիրի մարզի « Մերձավանի միջնակարգ դպրոց »ՊՈԱԿ

Հաստատում եմ

Տնօրեն Զ.Ստեփանյան

*Թեմատիկ պլանավորում*

***2023-2024 ուստարի***

***Տարեկան***

***Առարկան*** Մայրենի

***Դասարան*** Vա

***Ժամաքանակ*** 238 ժամ

***Ուսուցիչ*** Ա. Կարապետյան

Պահպանված է ուսպլանով նախատեսված ժամաքանակը

Փոխտնօրեն՝ Ս.Հարությունյան

Համապատասխանում է պետական չափորոշիչին և ծրագրին

Մ/մ նախագահ՝ Ա.Մեսրոպյան

ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

**2023 - 2024** ուստարի Մայրենի 5-րդ դասարան

Digitally signed by STEPANYAN ZARUHI 5205770120
Date: 2023.09.10 08:49:36 AMT

(տարեկան 238 ժամ, շաբաթական 7 դասաժամ)

1-ին կիսամյակ ՝ 105 Ժամ

Հեղինակներ՝ Աշոտ Գալստյան

Թամարա Թովմասյան

| հհ | ԹԵՄԱ | Ժամ | ՆՊԱՏԱԿ | ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ | ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Նախորդ դասարանում անցածիկրկնություն | 1 | Վերհիշել և ամրապնդել անցած դասարանում սովորածը: | Վերարժևորի և ճանաչի սեփականգիտելիքները: | |
| 2 | Մուտքի դաս: Զրույց մայրենիի մասինԷջ 5 | 1 | Բացատրել՝ ՀՀ պետական լեզուն հայերենն է: Սեր արթնացնել մայրենիի հանդեպ: Նպաստել մայրենի լեզվի պահպանմանն ուզարգացմանը | Գիտակցի մայրենի լեզվի դերը հայմարդու կյանքում: Արժևորի մայրենի լեզուն՝ որպես ազգապահպանության և գոյատևմաննախապայման: Մայրենի լեզվի պահպանման գործում կարևորի սեփական անձը: | Գրել ասույթներ մայրենիին նվիրված |
| 3 | Մեսրոպ Մաշտոցը և հայերեն տառերի ծնունդը Էջ 6-7 | 1 | Ծանոթացնել Մաշտոցի կյանքին ու գործունեությանը և հայոց գրերի ստեղծման պատմությանը: | Բնութագրի գրերի գյուտը՝ հին և միջնադարյանգրականության բովանդակության, պատկերային համակարգի, ազգային արժեքների ժամանակի և տարածության համատեքստում: Մեկնաբանի այբուբենի դերը | Գրել տեղեկություն Մեսրոպ Մաշտոցի մասին |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | հին և միջնադարյան գրականության ազգային արժեհամակարգի դրսևորման և մշակութային արժեքների պահպանման գործում: | |
| | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Արժևորի գրերի գյուտը:<br>Գնահատի Մեսրոպ Մաշտոցի և գրերի գյուտի դե-րը հայ ժողովրդի կյանքում:<br>Կենսագրությունից ելներով՝ արժևորի Մաշտոցի գործունեությունը նրա ապրած ժամանակաշրջանիհամատեքստում: | |
| 4 | Հայերենի այբուբենը և տառերիթվային արժեքը)<br>Էջ 7 (ուսուց. գրավոր) | 1/1 | Ծանոթացնել հայերենի այբուբենին և նրա թվային արժեքին: | Մաշտոցին ներկայացնի որպես Հայ առաքելական եկեղեցու սրբերի շարքին դասվող կերպար: | Առաջ.3,4<br>Էջ 8 |
| 5 | Սիլվա Կապուտիկյան,<br>«Խոսք իմ որդուն» բանաստեղծությունը<br>էջ 9 | 2/1 | Ծանոթացնել Ս. Կապուտիկյանի բանաստեղ-ծությանը և դրա միջոցով ցույց տալ մեր լեզվի հարստությունն ու գեղեցկությունը: | «Խոսք իմ որդուն» բանաստեղծության բովանդակությունը վերաշարադրի արձակ շարադրանքով: | Բառային աշխատանք 4,<br>Էջ 10 |
| 6 | Սիլվա Կապուտիկյան,<br>«Խոսք իմ որդուն» բանաստեղծությունը<br>էջ 9 | | Ծանոթացնել Ս. Կապուտիկյանի բանաստեղ-ծությանը և դրա միջոցով ցույց տալ մեր լեզվի հարստությունն ու գեղեցկությունը:<br>Նպաստել մայրենի լեզուն աշակերտին սիրելիդարձնելուն: | Արժևորի այբուբենի թվային արժեքը:<br>«Խոսք իմ որդուն» բանաստեղծության բովանդակությունը վերաշարադրի արձակ շարադրանքով:<br>Բանավոր խոսքում պահպանի հայերենի հնչյուն-ների ճիշտ արտասանությունը:<br>Կարևորի մայրենի լեզվի դերը սեփական հույզերը,ապրումները, մտքերը գրագետ և շրջապատին հասկանալի ձևակերպելու գործում: | Սովորել կարդալ<br>Բառային աշխատանք 4,<br>Էջ 10 |

| | | ԲԱԺԻՆ I: ԼԻՆՈՒՄ Է, ՉԻ ԼԻՆՈՒՄ | | | |
|---|---|---|---|---|---|
| 7 | Ի՞նչ է հեքիաթը: Էջ **12**<br>«Ոսկի արտ» հայկական ժողովրդական հեքիաթը:<br>Էջ 13-14 | 6/1 | Ծանոթացնել հեքիաթի տեսակներին և ժանրային առանձնահատկություններին:<br><br>Ծանոթացնել հայկական ժողովրդական հեքիաթի առանձնահատկություններին՝ «Ոսկի արտ» հեքիաթի միջոցով:<br>Սովորողի մեջ ձևավորել տեքստի ուսում-նասիրման, մտքերը տարբեր նախադա- սություններով արտահայտելու և հիմնա- կանն ու երկրորդականը միմյանցից ա- ռանձնացնելու կարողություններ: | Ներկայացնի հեքիաթը՝ որպես ժողովրդական բանահյու- սության տեսակ:<br><br>Տարբերի հեքիաթի տեսակները (հրաշապատում, կենդա- նական, իրապատում) և բացատրի ժանրային առանձնա- հատկությունները՝ արտահայտիչ և հասկանալով ընթերցե-լով:<br><br>Կարողանալ ըմբռնի հեքիաթի և իրականության տարբերու- թյունը: | Բառային աշխատանք 2,3 Էջ 15 |
| 8 | «Ոսկի արտ» հեքիաթի բովան- դակությունը և գաղափարը: Էջ 13-14<br>Նախադա սություն Էջ 15 | 6 / 2 | Զարգացնել ընթերցելու, կարդացածը վերարտադրելու, հիմնական գաղափարը մատնանշելու, խմբում աշխատելու կարո- ղություններ՝ հարստացնելով բառապա- շարը<br><br>տարբեր տեսակի նախադասութ- յունների կիրառմամբ: | Տեքստում զանազանի գլխավորը երկրորդականից, կազմի գրագետ խոսք, վերարտադրի լսածն ու կարդացածը՝ պահ- պանելով դեպքերի տրամաբանական<br><br>հաջորդականությունը:<br>Տեքստից առանձնացնի հեքիաթի գլխավոր միտքն արտա- հայտող նախադասությունը, ցույց տա իրականի և երևա- կայականի սահմանները: | ֆՏեքստային աշխատանք5 Էջ 15 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 9 | «Ոսկի արտը» հեքիաթի կերպարների բնութագիրը:<br>Էջ 13-14<br><br>Նախադասյու<br>նէջ 16 | | Նպաստել սովորողների ընթերցելու, հե- քիաթի տեքստը հասկանալու, հերոսնե- րին բնութագրելու կարողությունների զարգացմանը՝ հարստացն ելով բառապա- շարը տարբեր տեսակի նախադասութ- յունների կիրառմամբ: | Բնագիրը կարդա վարժ, անսխալ ու արտահայտիչ:<br>Վերարտադրի ընթերցած հեքիաթը՝ բնութագրելով և վեր-լուծելով կերպարները:<br>Հեքիաթի բովանդակությունը վերարտադրի ստեղծագոր-ծաբար: Նկարագրի և ներկայացնի հերոսներին, նրանց արարք-ներն ու դրդապատճառները:<br>Տեքստում ցույց տա դուր եկածնախադասությունները և հիմնավորի ընտրությունը: | Առաջադրանք 2,էջ16 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 10 | «Ոսկի արտը» հեքիաթի վերլուծությունը: Էջ 13-14 Նախադաuն ությունէջ 15 | 6/4 | Նպաստել սովորողի բառապաշարի հարստացմանը, կապակցված խոսք կազմելու կարողության զարգացմանը: Զարգացնել վերլուծելու կարողություններ: Ձևավորել անսխալ գրելու կարողություն: | Վերարտադրի ‹Ոսկի արտ» հեքիաթը՝ բնութագրելով և վերլուծելով կերպարները, կատարի համեմատական բնու-թագիր: Նկարագրի և ներկայացնի հերոսներին, նրանց արարքնե- րի պատճառահետևանքային կապը: Տեքստից ընտրված բառերով կազմինախադասություններ: | Առաջադրանք 5,էջ17 |
| 11 | «Ոսկի արտը» հեքիաթի դաստիարակչական նշանակութ յունը:Էջ 13-14 Նախադաuն ությունէջ 15 | 6 / 5 | Հեքիաթի ուսումնասիրության հիման վրա ձևավորել ազնվություն, բարություն, մեծահոգություն, հարգանք, հանդուրժողականություն, պարտաճանաչություն և այլն: Ձևավորել որոշակի վերաբերմունք և արժեքային համակարգ: Զարգացնել սովորողների ստեղծարարությունը: | Տեքստից առանձնացնի հեքիաթի գլխավոր միտքն արտահայտող նախադասությունը, ցույց տա իրականի և երևակայականի սահմանները: Կարծիք հայտնի հեքիաթի մասին: Ստեղծագործության մեջ պատկերած պատմությունների և գործող անձանց մասին դատի իրեն հետաքրքրող և կա- բնոր տեսանկյունից: Անվանի տեքստի գեղագիտական արժեքավոր հատվածները: Գնահատի հերոսների վարքագիծը և արտահայտել վերաբերմունք: Գործող անձի գործունեությունը կապի անհատական կենսափորձի հետ և հիշի նման իրավիճակներ: Գնահատի հեքիաթի ազդեցությունը անձի արժեհամակարգի ձևավորման վրա: | Առաջադրանք 9,էջ 17 |
| 12 | Արտադասարանական ընթերցանություն | 1 | | | Կարդալ որևէ հեքիաթ և ներկայացնել |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 13 | «Հայրը և զավակները» հեքիաթը<br>Էջ 18-20<br>Հաղորդակցում,<br>տեսակներըԷջ 21 | 5<br>/<br>1 | Պատկերացում տալ խորվաթական ժո-ղովրդական հեքիաթների մասին:<br>Ծանոթացնել խոսքի հաղորդակցման տեսակներին: | Կարդա արտահայտիչ և սահուն:<br>Հեղինակային և սեփական բառերովհամառոտ պատմի հե-քիաթը:<br>Բանավոր և գրավոր վերաշարադրիհեքիաթը տարբեր հե-րոսների անունից:<br>Կարծիք հայտնի հեքիաթի մասին:<br>Գտնի հեքիաթի բովանդակությանըհամապատասխան մեղեդի,<br>նկարազարդումներ անի կամ ծեփի:<br>Կատարի նորածանոթ բառերիբացատրություն: | Բառային աշխատանք 3<br>Էջ 20 |
| 14 | «Հայրը և զավակները» հեքիաթի բովանդակությունը և գաղա փարը:<br>Էջ 23<br><br>Հաղորդակցում,<br>տեսակներըԷջ 21 | 5<br>/<br>2 | Խթանել սովորողի հաղորդակցական կարողությունների զարգացումը:<br>Բացատրել հեքիաթի բովանդակությունն ու գաղափարը, հնարավորություն տալ ա- շակերտին սեփական բառերով արտա- հայտել լսածն ու հասկացածը: | Վերարտադրի «Հայրը և զավակները» հեքիաթը՝ վեր հա- նելով նրա հիմնական գաղափարը:<br>Հորինի հեքիաթ՝ պահպանելով ժանրին բնորոշ առանձնա-հատկությունները:<br>Որոշի խորվաթական ժողովրդական հեքիաթի տարբերա- կիչ առանձնահատկությունները՝ համեմատելով հայկական ժողովրդական հեքիաթների հետ:<br>Համեմատի հեքիաթի գրական տեքստը համանման կինո-նկարի, ներկայացման կամ մուլտֆիլմի հետ. նշի նմանութ- յուններըև<br>արբերությունները: | Բառային աշխատանք 5,6<br>Էջ 20 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 15 | «Հայրը և զավակները» հեքիա-թի կերպարների բնութագիրը:<br>Էջ 18-23<br><br>Գրավոր և բանավոր<br>խոսքէջ 22 | 5<br>/<br>3 | Զարգացնել գրավոր և բանավոր խոսքը:<br>Զարգացնել սովորողի՝ գրական հերոսին բնութագրելու կարողությունները: | Ներկայացնի հեքիաթի ժանրայինբնութագիրը, ցույց տա<br>լեզվաոճական առանձնահատկությունները:<br>Նկարագրի և ներկայացնի հերոսներին, նրանց արարքնե-րի պատճառահետևանքային կապը:<br>Մասնակցի հեքիաթի բեմադրման աշխատանքներին: | Տեքստային աշխատանք 6.7 Էջ 21 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 16 | Հեքիաթի վերլուծությունը: Էջ 18- 23<br><br>Նախադասության տեսակները՝ ըստ հաղորդակցության<br>էջ 25 | 5/4 | Զարգացնել սովորողների ստեղծարա- րությունը:<br>Ձևավորել կերպարը վերլուծելու կարո- ղություններ:<br>Նպաստել նախադասության տեսակներն ըստ հաղորդակցության և հնչերանգի ըն-կալելուն: | Վերարտադրի հեքիաթը՝ բնութագրելով և վերլուծելով կեր-պարները, հերոսների համեմատական բնութագիրկատա- րի:<br>Ճանաչի ու բացահայտի բնագրում առկա նախադասութ- յան տեսակները՝ ըստ հաղորդակցության և հնչերանգի:<br>Տեքստում տարբերի նախադասությունները՝ ըստ հաղոր- դակցության և հնչերանգի: | Առաջադրանք 1 էջ 22 |
| 17 | «Հայրը և զավակները» հեքիաթիդաստիարակչական նշանակությունը:<br>Էջ 18-23<br><br>Նախադասության տեսակներն ըստ հաղորդակցության և հնչերանգի<br>էջ 25 (ուսուց. գրավոր) | 5/5 | Ձևավորել երախտագետ ու լավությունը գնահատող անձ և քաղաքացի:<br>Զարգացնել սովորողների ընթերցելու, հեքիաթի տեքստը հասկանալու կարո- ղություններ:<br>Նպաստել նախադասության տեսակներն ըստ հաղորդակցության և հնչերանգի ըն-կալելուն: | Նկարագրի հերոսներին և ներկայացնի նրանց արարք- ներն ու դրդապատճառները:<br>Ճշտի սեփական վերաբերմունքը հերոսների նկատմամբ (հիանում է, մեղադրում է, արդարացնում է):<br>Հիմնավորի կարծիք՝ համապատասխան բառերի, արտահայ- տությունների, հատվածների մեջբերումով:<br>Հեքիաթի բովանդակությունը վերարտադրի ստեղծագոր- ծաբար՝ կիրառելով նախադասության տարբեր տեսակներ՝ ըստհաղորդակցության և հնչերանգի:<br>Մատնանշի տեքստի նախադասության տեսակներն ըստ հնչերանգի, ճիշտ կետադրի | Բառային աշխատանք 2, Էջ 24<br>Տեքստային աշխատանք 5, Էջ 24 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | նախադասությունները: Կազմի կապակցված խոսք՝ կիրառելով համապատասխան լեզվաքերականական նյութը: | |
| 18 | Թեմայի ամփոփում | 1 | | Նախապատրաստվել թեմատիկ գրավոր աշխատանքին | |
| 19 | Թեմատիկ գրավոր աշխատանք 1 | 1 | | | |
| 20 | Թեմատիկ գրավոր աշխատանքի քննարկում և սխալների ուղղում | 1 | | | |
| 21 | Գրիմ եղբայրներ. «Անտառի տնակը» հեքիաթը: Էջ 26-27 Նախադասության տեսակները՝ ըստկազմության Էջ 30 | 6/1 | Ծանոթացնել հեղինակային հեքիաթի առանձնահատկություններին: Նպաստել նախադասության տեսակներն ըստ կազմության ընկալելուն: | Բացատրի հեղինակային հեքիաթի տարբերակիչ առանձ-նահատկությունները: Արտահայտիչ և հասկանալովընթերցի «Անտառի տնակը» հեքիաթը: Հեքիաթը վերարտադրի պարզ նախադասություններով: Պատմելիս կիրառի պարզ ընդարձակ նախադասություն-ներ: Տեքստում ճանաչի պարզ և բարդ նախադասությունները, կազմի համապատասխան | Բառային աշխատանք3, Էջ 28 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | նախադասություններ: | |
| 22 | «Անտառի տնակը» հեքիաթի բո-վանդակությունը: Էջ 33-34 Պարզ և բարդ նախադասությունէջ 30 | 6/2 | Նպաստել հեքիաթի բովանդակությունն ընկալելուն: Ծանոթացնել պարզ և բարդ նախադա-սությունների կառուցվածքին: | «Անտառի տնակը» հեքիաթի բովանդակությունը վերաշա- րադրի ստեղծագործաբար: Վերաշարադրի հեքիաթի բովանդակությունը՝ ըստ պլանի և ստեղծագործաբար: | Տեքստային աշխատանք 2,3 Էջ 28 |
| 23 | «Անտառի տնակը» հեքիաթի գաղափարը: Էջ 33-34 Պարզ համառոտ և Էջ 30 | 6/3 | Նպաստել հեքիաթի արտահայտած գա-ղափարը հասկանալուն: Օգնել հասկանալու պարզ և բարդ նա-խադասությունների կառուցվածքային տարբերությունները: | Ներկայացնի հեքիաթի գաղափարըսեփական բառերով: Բնագրում գտնի գլխավոր գաղափարն արտահայտող նա-խադասությունը: | Առաջադրանք 3,5 Էջ 31 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 24 | «Անտառի տնակը» հեքիաթի կերպարները:<br>էջ 38-40<br>Նախադասություն- բառ- հնչյուն (պատմողական, հարցական, հրամայական, բացականչա- կան նախադասություններ)<br>էջ 32 | 6/4 | Ծանոթացնել պատմողական, հարցա- կան, հրամայական, բացականչական նախադասությունների քերականական առանձնահատկություններին: | Բնութագրի հեքիաթի հերոսներին՝ ըստ նրանց արարքների:<br>Համեմատի տարբեր հեքիաթների տեքստեր, հերոսներին,<br>նշի նրանց տարբերությունները,նմանությունները:<br>Բնագրում գտնի պատմողական, հարցական, հրամայա- կան, բացականչական նախադասություններ, ինքնուրույն կազմի համապատասխան նախադասություններ և կետադրի: | Բառային աշխատանք 3<br>Էջ 40<br>Տեքստային աշխատանք 2,9<br>Էջ41 |
| 25 | «Անտառի տնակը» հեքիաթի դաստիարակչական նշանա-կությունը:<br>Հնչյունաբանություն: Հայերենիհնչյունները:<br>էջ 36-37<br>Ձայնավոր<br>հնչյուններէջ 42 | 6<br>/<br>5 | Ուսումնասիրված հեքիաթից ելնելով՝ ձևավորել սովորողի արժեքային համա- կարգը:<br>Ծանոթացնել հայերենի ձայնավոր հնչյուն-ներին: | Հեքիաթում տարբերի և առանձնացնի գլխավոր մտքերը երկրորդականից, վերաշարադրի համապատասխան տրա- մաբանական հերթականությամբ՝ ըստ մտադրության և նա- խօրոք կազմածպլանի:<br>Հաղորդելիք նյութի համար ընտրի համապատասխան ե- րաժշտություն, կտավի վերատպություն, քանդակ, մուլտֆիլ- մից հատվածներ և բացատրի ընտրության շարժառիթը:<br>Ձևակերպի հեքիաթի եզրակացությունը մեկ նախադասութ- յամբ:<br>Տեքստի ընտրված հատվածում գտնել ձայնավոր հնչյունները և հիմնավորի: | Առաջադրանք 5<br>Էջ 37 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 26 | «Անտառի տնակը հեք իաթի ամփոփումը | 6/6 | Կատարել թեմայի ընդհանրացում և ամ-րապնդում: | Արտահայտիչ, վարժ կարդա տեքստերը, պահպանի հայե-րենինհատուկ արտասանությունը, շեշտադրումը:<br>Վերարտադրի դեպքերի հաջորդականընթացքը՝ պահպա-նելով տեքստի հիմնական բովանդակությունը:<br>Պատմելիս կիրառի յուրացրածուսումնական նյութերի լեզ- վաքերականական առանձնահատկությունները:<br>Բացատրի ձայնավորների արտասանական առանձնա հատկությունները: | Տեքստային աշխատանք 11 Էջ 11 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 27 | Աննա Աղամյան. «Տառի, հեռա- խոսի ու համակարգչի վեճը» հեքիաթը:<br>էջ 42-43<br>Բաղաձայն<br>հնչյուններէջ<br>47 | 5<br>/<br>1 | Ծանոթացնել ժամանակակից հեղինակ-ների ստեղծած հեքիաթի առանձնահատ-կություններին:<br>Մատչելի բացատրել ստեղծագործության միտքն ու գաղափարը, հնարավորություն տալ աշակերտին սեփական բառերով արտահայտելու լսածն ու հասկացածը:<br>Ընկալելի դարձնել ձայնավորների և բա-ղաձայնների տարբերությունները: | Կարդա հասկանալով և կազմի հեքիաթում պատմվող դեպքերի պլան:<br>Հեղինակային և սեփական բառապաշարով պատմել հեքիա-թը:<br>Կարողանալ ցույց տա իրականի ներևակայականի սահ-մանները:<br>Տեքստում գտնի բաղաձայն հնչյունները և տեսակավորել<br>աղյուսակում: | Բառային աշխատանք 2,3 էջ 46 |
| 28 | «Տառի, հեռախոսի ու համա-կարգչի վեճը» հեքիաթի<br>բովանդակությունը<br>էջ 44-45<br>Բաղաձայն<br>հնչյ<br>ուններիտեսակները<br>էջ 47 | 5/2 | Զարգացնել սովորողի ստեղծագործութ-յան բովանդակությունը սեփական և հե-ղինակային բառապաշարով ներկայաց-նելու կարողությունները և հմտություննե-րը:<br>Ծանոթացնել բաղաձայն հնչյունների տեսակներին: | Վերաշարադրի հեքիաթի բովանդակությունը ըստ պլանի և ստեղծագործաբար:<br>Տեքստից առանձնացնի հեքիաթի գլխավոր միտքն արտա-հայտող նախադասությունը:<br>Մատնանշի բաղաձայն հնչյուններնըստ տեսակի:<br>Կազմի կապակցված խոսք՝ կիրառելով համապատասխանլեզվաքերականական նյութ:<br>Հայերենի հնչյունական համակարգը համեմատի օտար լե- զուների հնչյունական համակարգի<br>հետ: | Տեքստային աշխատանք 2,4 էջ 46 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 29 | «Տառի, հեռախոսի ու համա- կարգչի վեճը» հեքիաթի կեր- պարների բնութագիրը:<br>էջ 42-45<br><br>Բաղաձայն հնչյու ններիտեսակները<br>էջ 47 (ուսուց. գրավոր) | 5/3 | Նպաստել սովորողի բառապաշարը հարստացնելուն, զարգացնել կապակց- ված խոսք կազմելու կարողությունները:<br>Ձևավորել անսխալ գրելու ու կարդալու կարողություններ: | Թվարկի հեքիաթի հերոսներին:<br>Վերաբերմունք արտահայտի յուրաքանչյուրի վերաբերյալ:<br>Տեքստից ընտրած փաստերով հիմնավորի սեփական կան- խատեսումը:<br>Տեքստում գտնի գրական կերպարի արտաքինը, բնավո- րությունըներկայացնող հատվածները, արարքների դրդա- պատճառներըբացահայտող խոսքային միջոցները, հիմնվե- լով դրանց վրա՝ վերլուծել:<br>Բնութագրի հեքիաթի հերոսներին՝ ըստ նրանց արարքնե-րի:<br>Համեմատի տարբեր հեքիաթների տեքստեր, հերոսներին, նշի նրանց տարբերությունները, նմանությունները, ձևակերպի եզրակացություն: | Տեքստային աշխատանք 8, Էջ 47 |
| 30 | «Տառի, հեռախոսի ու համա- կարգչի վեճը» հեքիաթի վերլու- ծությունը:<br>էջ 42-45<br>Բաղաձայն հնչյու ններիտեսակները<br>էջ 47 | 5/4 | Զարգացնել տեքստը վերլուծելու կարո- ղություններ:<br>Խթանել սովորողի հաղորդակցական կարողությունների զարգացումը:<br>Ձևավորել անսխալ գրելու ու կարդալու կարողություններ: | Արտահայտիչ, վարժ կարդա տեքստը,պահպանի հայերե- նին հատուկ արտասանությունը, շեշտադրումը, վերարտադրիդեպքերի հաջորդական ընթացքը՝ պահպանելով տեքստի բովանդակությունը:Վերլուծի կերպարները՝ առանձնացնելով սիրելի հերոսին:<br>Արդարացնի կամ մեղադրի կերպարներից յուրաքանչյու-րին: | Շարադրություն «Հեռախոսն իմ կյանքում» |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 31 | «Տառի, հեռախոսի ու համա- կարգչի վեճը» հեքիաթի դաս-տիարակչական նշանակությու նը:<br>էջ 42-45<br>Բաղաձայն հնչյունների տե-սակները<br>էջ 47 | 5/5 | Ձևավորել որոշակի վերաբերմունք և ար-ժեքային համակարգ:<br>Ձևավորել անսխալ գրելու ու կարդալուկարողություններ: | Ընկալի հեքիաթի դաստիարակչական նշանակությունը անձի ձևավորմանգործում:<br>Առանձնացնի հերոսներին և նրանց արարքները բնութագրողբառերն ուարտահայտությունները:<br>Բանավոր կամ գրավոր արտահայտի կարծիք հերոսներիվարքագծի կամ դեպքերի կապակցությամբ:<br>Տարբերի բաղաձայն հնչյուններիտեսակները, դրանք ճա-նաչի տեքստում: | Տեքստային աժաջադրանք 10<br>էջ 47 |
| | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 32 | Ընտրած որևէ հեքիաթի քննարկում /Հովհաննես Թումանյանի «Անխելք մարդը» հեքիաթը/<br>էջ 48-50 | 1 | Նպաստել սովորողի բառապաշարը հարստացնելուն, կապակցված խոսք կազմելու կարողություններ, որոշակի վե- րաբերմունք և արժեքային համակարգ ձևավորելուն:<br>Ձևավորել քննադատական մտածողութ-յուն: | Կարդա առոգանությամբ՝ պահպանելով հայերենին բնորոշ արտասանությունը, ուղղախոսությունը:<br>Կարդա ընտրովի հատվածներ՝ հիմնավորելով ընտրությունը:<br>Սեփական վերաբերմունք արտահայտել ստեղծագործութ-յան վերաբերյալ:<br>Ներկայացնի հեղինակի հույզերը իր հերոսների նկատ-մամբ:<br>Հորինի հեքիաթ՝ հեքիաթին բնորոշ առանձնահատկութ-յունները հաշվի առնելով: | Բառային աշխատանք 3,5<br>Էջ 50,51 |
| 33 | Արտադասարանական ընթերցանություն | | | | |
| 34 | Արտադասարանական ընթերցանություն | | | | |
| 35 | Թեմատիկ գրավոր աշխատանք ***2*** | ***1*** | Ամփոփել և ընդհանրացնել գիտելիքները: | | |
| 36 | Թեմատիկ գրավոր աշխատանքի քննարկում և սխալների ուղղում | | | | |
| 37 | Կազմել որևէ հեքիաթի բեմա-գիր /Հովհաննես Թումանյանի «Անխելք մարդը»հեքիաթը / | 1 | Զարգացնել ստեղծարարական կարողու-նակություններ: | | Տեքստային աշխատանք 1,<br>Էջ 51 |
| 38 | Հեքիաթի բեմադրում /Հովհաննես Թումանյանի «Անխելք մարդը» հեքիաթը | 1 | Զարգացնել դերասանական հմտություն-ներ: | | Տեքստային աշխատանք 9,<br>Էջ 51 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | / | | | | |
| 39 | Թեմատիկ կրկնություն | 1 | Ամրապնդել և ընդհանրացնել գիտելիքները: | | Կրկնել անցած նյութը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ԲԱԺԻՆ **II.** ԱՌԱԿՍ ԻՆՉ ԿՑՈՒՑԱՆԵ | | | |
| 40 | Ի՞նչ է առակ ըէջ 54<br>Եզոպոս, «Եղջերուն և խաղողը»առակը:<br>էջ 55 | 4/1 | Ուսուցանել առակի ժանրային առանձնահատկությունները:<br>Ծանոթացնել արձակ և չափածո առակ-ների տեսակներին: | Մեկնաբանի առակի ժանրային բնութագիրը և ձևավորմանլեզվական առանձնահատկությունները:<br>Մեկնաբանի առակի կառուցվածքային առանձնահատկությունները:<br>Ներկայացնի առակի տեսակները նկառուցվածքը:<br>Բացատրի տվյալ առակին բնորոշ այլաբանությունը և բա-րոյախոսությունը:<br>Տարբերի արձակ և չափածո առակները, նրանց բնորոշ ա-ռանձնահատկությունները: | Բառային աշխատանք3,<br>Էջ 55 |
| 41 | «Եղջերուն և խաղողը» առակի բովանդակությունը և գաղա փա-րը:էջ 55<br>Հնչյուն և տառ<br>էջ 36 | 4/2 | Ծանոթացնել առակի բովանդակությանը և նրան բնորոշ լեզվաոճական առանձնա-հատկություններին:<br>Բացատրել հնչյուն և տառ հասկացութ-յունների տարբերությունները: | Վերարտադրի ընթերցած առակի բովանդակությունը և ընկալի առակին բնորոշ լեզվաոճական հնարները:<br>Նկարագրի և բնութագրի առակիհերոսներին:<br>Ինքնուրույն տեսակետ հայտնի ընթերցած առակի վերա-բերյալ:<br>Վերարտադրի ընթերցած առակի բովանդակությունը և | Բառային աշխատանք5,<br>Էջ 55 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | ընկալի նրա բարոյախոսական նշանակությունը:<br>Զանազանի հնչյուն և տառ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | եզրույթները: | |
| 42 | «Եղջերուն և խաղողը» առակի հերոսների բնութագիրը և բա-րոյախոսությունը:<br>էջ 55<br>Հնչյու<br>ն և<br>տառ<br>էջ 36 | 4<br>/<br>3 | Ընկալել տալ առակի այլաբանությունը՝ որպես գրական հնարք:<br>Ծանոթացնել հնչյուն և բառ հասկացութ- յունների գրության և արտահայտության առանձնահատկություններին: | Բացատրի «Եղջերուն և խաղողը» առակի բարոյախոսական նշանակությունը, նրան բնորոշ լեզվառճական հնարները:<br>Ճանաչի հայ և օտարազգի նշանավոր առակագիրներին և<br>համեմատի նրանց ստեղծագործությունները:<br>Հորինի առակ՝ հաշվի առնելով ժանրային առանձնահատ-կությունները:<br>Տեքստում գտնի և ապացուցի տառի և հնչյունի գրությանն արտասանության տարբերությունը: | Տեքստային աշխատանք 1,<br>Էջ 56 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 43 | «Եղջերուն և խաղողը» առակի այլաբանությունը<br>էջ 55<br>Հնչյունն<br>տառէջ<br>36 | 4<br>/<br>4 | Զևավորել բարձր արժեհամակարգով ապրելու գիտակցում: | Ընկալի առակի այլաբանությունը և դաստիարակչականնշանակությունը:<br>Կատարի առակի լեզվաոճական ևբովանդակային վերլու-ծություն:<br>Մասնակցի առակի շուրջ ծավալված մտքերի փոխանակ-մանը արտահայտելով դիրքորոշում:<br>Արտահայտի զգացմունքներ, ապրումներ և փորձի բա-ցատրելդրանք.<br>(զարմացա, որովհետև…, զայրացա,քանի որ ...):<br>Հաղորդակցվելիս դրսևորի բարեկիրթխոսք և վարքագիծ: | Տեքստային աշխատանք 11, Էջ 56 |
| 44 | Թեմատիկ գրավոր աշխատանք 3 | | | | |
| 44 | Վարդան Այգեկցի, «Բարին ու չարը» առակը:<br>էջ 58-59<br>Բառ և<br>վանկէջ<br>60-61 | 5<br>/<br>1 | Նպաստել առակի ընկալմանը:<br>Զևավորել բառի վանկային և հնչյունայինկառուցվածքը ճանաչելու ունակություն: | Բացահայտի առակի վերնագրի և բովանդակության կապը:<br>Տարբերակի տեքստում հեղինակի ևգործող անձանց խոս-քերը,<br>երկխոսությունը և մենախոսությունը:<br>Բացատրի վանկի դերը գրավորխոսքում: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 41 | «Բարին ու չարը» առակի բո-վանդակությունը և գաղափարը: էջ 58-59<br>Միավանկ<br>բառեր էջ<br>60-61 | 5<br>/<br>2 | Ծանոթացնել «Բարին ու չարը» առակի բովանդակությանը:<br>Նպաստել միավանկ բառերը բազմա-վանկից տարբերելուն: | Տեքստում ինքնուրույն գտնի բառեր և արտահայտություն- ներ, որոնք հեղինակը կիրառել է գործող անձանց, փաս- տերն ու իրադարձությունները նկարագրելուհամար:<br>Պատմի առակում ներկայացված պատմությունը հերոսնե- րից մեկի բերանով:<br>Տեքստն ավելի լավ գիտակցելու նպատակով հարցեր առա- ջադրի կարդացածի հետ կապված:<br>Կողմնորոշվի տեքստի իմաստային բովանդակության մեջ և կարողանապատասխանել դասագրքում զետեղված հարցերին:<br>Տեքստում ինքնուրույն գտնի բառեր և արտահայտություն- ներ, որոնքհեղինակը կիրառել է գործող անձանց, փաստերն ու իրադարձությունները նկարագրելուհամար:<br>Տեքստից ընտրված հատվածում ցույց տա միավանկ բառերը: | Բառային աշխատանք 4,<br>էջ 59 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 45 | Բարին ու չարը» առակի կեր- պարները և բարոյախոսությու- նը: էջ 58-59 Բազմավանկ բառերէջ 60-61 | 5 / 3 | Մշակել առակի հենակետային բառերը գտնելու կարողություն: Ծանոթացնել բազմավանկ բառերի ա- ռանձնահատկություններին: | Տեքստից առանձնացնի հերոսներին բնութագրող դեպքե- րը, բնության պատկերները նկարագրող բառերն ու արտա- հայտությունները: Որոշի առակի գործող անձանց խոսքի առանձնահատկութ-յունները: Հակադրի առակի հերոսների արարքները այլ առակների տարբեր հերոսների արարքների հետ: Բացահայտի նրանց վերաբերմունքը շրջապատի նկատ- մամբ: | Բառային աշխատանք 8, էջ 59 |
| 46 | Բարին ու չարը» առակի կեր- պարները և բարոյախոսությու- նը: էջ 58-59 Բազմավանկ բառերէջ 60-61 | 5/4 | | Որոշի հերոսների արարքների դրդապատճառները, դրսևորի վերաբերմունք դրանց նկատմամբ կամ գնահատի՝ ուսուցչիուղղորդմամբ: Գնահատի հերոսների վարքագիծը և արտահայտի սեփա- կանվերաբերմունքը: Տեքստում գտնի և ցույց տա բազմավանկ բառեր: | Տեքստային աշխատանք 5, էջ 60 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 47 | «Բարին ու չարը» առակի այլա- բանությունը դաստիարակչա-<br>էջ 58-59<br>Բաց և փակ վանկեր<br>էջ 60-61 (ուսուց. գրավոր) | 5/5 | Նպաստել տվյալ առակի բարոյախոսա- կան ու դաստիարակչական նշանակութ- յունն ընկալելուն:<br>Ծանոթացնել բաց և փակ վանկերի կազ- մությանը, բառերի վանկատման սկզբունք-ներին:<br>Ուսուցանել վանկը և դրանով պայմանա- վորված շեշտադրությունն ու տողադար- ձը:<br>Ամրապնդել վանկի մասին ունեցած գի- տելիքները: | Վերարտադրի ընթերցած առակի բովանդակությունը և ըն- կալի նրա այլաբանությունը:<br>Բացահայտի առակի և իրականության տարբերությունը:<br>Գործող անձի գործունեությունը կապի անհատական կեն- սափորձի հետ և հիշի նման իրավիճակներ:<br>Տեքստն ավելի լավ գիտակցելու նպատակով՝ հարցեր առա- ջադրել կարդացածի հետ կապված:<br>Բեմադրի առակը՝ բեմագիր գրելով:<br>Դերերը կատարելու համար համապատասխանաբար օգտագործի օժանդակ միջոցները (ժեստ, դիմախաղ, բնորոշ շարժում, որոշակի արտասանություն, հարմարվածության կամ այլ հատկանիշներ և զգացմունքներ արտահայտող ակ- նարկներ):<br>Բացատրի վանկի ոճական արժեքը և նշանակությունը:<br>Մեկնաբանի վանկարար հնչյունիդերը վանկատման մեջ:<br>Տարբերի բաց, փակ վանկերը և դրանք գործնականում կիրառելուհմտություն ձեռք բերել վարժությունների միջոցով:<br>Տարբերի վանկը բառից: | Բառային աշխատանք 9,<br>էջ 60 |
| 48 | Արտադասարանական ընթերցանություն | 1 | | | |
| 49 | Արտադասարանական ընթերցանություն | 1 | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| | | | | | |
| 50 | Հովհաննես Շիրազ, «Հավերժա-<br>կան վեճ» առակը:<br>էջ 62<br>Բառային շեշտ էջ 64-65 | 4/1 | Ձևավորել արտահայտիչ ընթերցելու կա-<br>րողունակություն՝ հաշվի առնելով<br><br>հայերենի շեշտադրության առանձնահատկությունները:<br>Ծանոթացնել հայերենի շեշտի վերջնա-<br>վանկային դիրքին: | Ներկայացնի չափածո առակի առանձնահատկությունները:<br><br>Պարզաբանի՝ ինչով է տվյալ առակն իրհամար հետաքրքիր:<br>Մատնացույց անի՝ ինչն է հավանելառակում՝ պատմությու- նը, գործող «դեմքի» վարքը, բնության նկարագիրը, երկխո- սությունները և այլն:<br>Սեփական կարծիքի հիմնավորմանհամար կիրառի համա-պատասխան<br>տողեր կարդացած տեքստից և օրինակներանձնական փորձից:<br>Բանավոր և գրավոր խոսքում ճիշտ շեշտադրություն<br>կատարի՝ կիրառելով<br>շեշտադրության ընդունված կանոնները: | Բառային աշխատանք 1,<br>էջ 62 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 51 | Հավերժական վեճ» առակի բո- վանդակությունը և գաղափարը: էջ 62<br>Շեշտ էջ 64-65 | 4/<br>2 | Ձևավորել հասկանալով ընթերցելու, ա- ռակի ժանրին բնորոշ առանձնահատ- կություններն ընկալելու կարողություններ:<br>Նպաստել առակի բովանդակությունը հասկանալուն:<br>Ընկալելի դարձնել շեշտի ուղղախոսա- կան արժեքը:<br>Զարգացնել լեզվաքերականական նյութը կապակցված խոսքի մեջ կիրառելու կա- րողությունը: | Վերարտադրի առակի բովանդակությունը արձակ շարադ- րանքով և վեր հանի արտահայտած գաղափարը:<br>Տարբեր ձևերով արտահայտի վերաբերմունքը (օրինակ՝ համառոտ բնութագիր, մեկնաբանություն հերոսի վարքի մա- սին ...) գործողդեմքի նկատմամբ:<br>Ստեղծի առակի մեկ այլ ավարտով գրավոր տարբերակ:<br>Պարզաբանի արձակ և չափածո առակների լեզվաոճական առանձնահատկությունները:<br>Առակի իմաստը հաղորդելիս՝ ստեղծագործաբար օգտա- գործի հեղինակային բառապաշարը և գեղարվեստական միջոցները:<br>Բացատրի շեշտի ուղղախոսականարժեքը: | Բառային աշխատանք 5,<br>էջ 63 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 52 | Բնութագրել Հավե րժական վեճ»առակի հերոսներին:<br>էջ 62<br>Բառային շեշտ. էջ 64-65 | 4/3 | Ծանոթացնել Հավերժական վեճ» առա- կի գաղափարական բովանդակությունը:<br>Նպաստել սովորողի բառապաշարը հարստացնելուն, առակի այլաբանական հիմքի շուրջ որոշակի վերաբերմունք ձևավորելուն:<br>Նպաստել շեշտի ուղղախոսական արժե- քը հասկանալուն: | Ներկայացնի վերնագրի և տեքստի իմաստային փոխա- դարձ կապը:<br>Անվանի վերնագրի այլընտրանքայինտարբերակներ:<br>Անվանի տեքստի թեման, դատողություններ անել թեմայի շուրջ:<br>Առարկաների, երևույթների անվանման համար տարբերի և<br>օգտագործի նրանց արտաքին և իմաստային բնութագրիչներ:<br>Տեքստից առանձնացնի առակի հերոսներին բնութագրող դեպքերը, բնության պատկերները նկարագրողբառերն ու արտահայտությունները**:**<br>Մեկնաբանի հայերենի շեշտի վերջնավանկային դիրքը և ներկայացնի նրա շեղումները բանավոր և գրավոր խոս- քում:<br>Բացատրի շեշտի ուղղախոսական արժեքը, և ընկալի բառերի ճիշտ<br>շեշտադրության կարևորությունը: | Տեքստային աշխատանք 3,<br>Էջ 63<br>Առաջադրանք 1, էջ 66 |
| 53 | Հավերժական վեճ» առակի այ- լաբանությունը դաստիարակ-<br>էջ 62<br>Շեշտի կանոններից շեղումներէջ 65 | 4/4 | Ձևավորել առակի խրատական-դաս- տիարակիչ դերը ըմբռնելու, առակը վեր- լուծելու, սեփական դիրքորոշում ձևավո- րելու, բարոյական դասեր քաղելու կարո-ղություններ:<br>Մատչելի ուսուցանել հայերենի շեշտի վերջնավանկային դիրքի շեղումներն | Մեկնաբանի առակի դաստիարակչական նշանակությունը:Նկարի առակը՝ բովանդակությանը համապատասխան: Գտնի երաժշտություն՝ տեքստի ռիթմին համահունչ:<br>Առակի տեքստը կարդաարտահայտիչ և հասկանալով. | Տեքստային աշխատանք 5<br>Էջ 64<br>Առաջադրանք 3,էջ 66 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ըն- դունված օրինաչափությունից (հարադ- րավոր բառեր, օտար բառեր, դասական թվականներ, վերաբերականներ և այլն): | կազմի առակից սովորած բառերիբացատրական բառա- րան:<br>Մատնանշի առակի տեքստիկառուցվածքը՝ սկիզբ, ըն- թացք, ավարտ, խրատաբանություն: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Ծանոթացնել հայերենի շեշտի վերջնա- վանկային դիրքի և դրա շեղումների մա- սին: | Առանձնացնի առակի գլխավոր միտքը և ընթերցողին տրվող խրատը:<br>Հավաքի տեղեկություններ առակում նշվող առարկաների, կենդանիների, բույսերի, թփերի, մետաղների,երևույթների մասին և ներկայացնի:<br><br>Մեկնաբանի հայերենի շեշտի վերջնավանկային դիրքը և<br>ներկայացնի նրա շեղումները բանավոր և գրավոր խոսքում: | |
| 54 | Թեմատիկ գրավոր աշխատանք ***4*** | | Ստուգել և գնահատել ստացած գիտե- լիքները: | | |
| 55 | Թեմատիկ գրավոր աշխատանքի քննարկում և սխալների ուղղում | | | | |
| 56 | Հայրն ու որդին» ժողովրդա- կան առակը:<br>Բառի կազմություն<br>ըէջ 67 | 4<br>/<br>1 | Նպաստել առակի խրատական-դաս- տիարակիչ դերը ըմբռնելուն, առակը վեր- լուծելու, սեփական դիրքորոշում ձևավո- րելու, բարոյական դասեր քաղելու կարո- ղությունները զարգացնելուն:<br>Ծանոթացնել բառի բաղադրիչներին (արմատ, ածանց, հոդակապ): | Արտահայտիչ և հասկանալով կարդա Հայրն ու որդին» ժո- ղովրդական առակը, սովորած բառերը գործածի ստեղծա-գործաբար:<br>Թվարկի առակի հերոսներին:<br><br>Գնահատի առակի բառապաշարը,հիմնավորել լեզվի պար- զությունը:<br>Բացատրի բառերի կազմությունը՝ բերելով հա- մապատասխանօրինակներ:<br><br>Բացատրի՝ առակում ժամանակաշրջանը, միջավայրը ինչ | Բառային աշխատանք 2,<br>Էջ 69 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | կերպ են ազդում հերոսների հոգեբանության վրա: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
